Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ
«ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ»ՓԲԸ

Republic of Armenia
Lori marz
"LORI WATER AND SEWERAGE" CJSC

ՀՀ, 2007 ք.Վանաձոր, Ն.Ստեփանյան 2ա
2a N.Stepanyan St., 2007 Vanadzor, Armenia
Հեռ/ֆաքս` (+374 322) 4 82 00
Tel/Fax: (+374 322) 4.82.00
Էլ. փոստ` contact@loriwater. am
E-mail:contact@loriwater. am
Վեբ կայք` www.loriwater.am
Web page: www.loriwater.am

Ձ/Կ թիվ 14-1141

«01» 08 2014թ.

# ՀՐԱՎԵՐ

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի
կարիքների համար՝
շինանյութի ձեռքբերման

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված շինանյութ: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ԼՋ-ՇՀԱՊՁԲ-11/7-14-2»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել.Վանաձոր, Նելսոն Ստեփանյան 2 ա հասցեով, մինչև2014թ. Օգոստոսի 12-ը, ժամը՝ 13:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ա.Պողոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում՝ ք. Վանաձոր, Նելսոն Ստեփանյան 2 ա, հասցեում, օգոստոսի 12-ին, ժամը՝ 13:00-ին:Գնմանառարկա է հանդիսանում «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար՝ շինանյութի ձեռքբերումը:

«Լոռի-ջրմուղկոյուղի»ՓԲԸ-ի կարիքների համար՝ շին մատակարարման (որը կազմվածեն՝ 186 չափաբաժիններից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների

ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում(Հավելված N 1),ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. Գնային առաջարկ (Հավելված N 2):Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկն ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտնանհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք շինանյութի դեպքում՝ ներկայացնում է համարժեք գնման առարկայի անվանումը և ծագման երկիրը:

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ myarpi@yandex.ru:

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ

Գլխավոր տնօրենի տեղակալ Հ.Անտոնյան